ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Օձուն գյուղական համայնք, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 118-14
„05„ 05 2014 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 30-ի N 17-ից N 23 որոշումները:

Առդիր՝ տասնմեկ թերթ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար Ա. Տիգրանյան

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 17-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի 2014 թվականի ապրիլի 30-ի չորրորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ՋԵՆԻԹ» ՏԵՍԱԿԻ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԸ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

4) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0037-0031 ԵՎ 06-112-0442-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

5) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԽԱԼԱԹԻ ՏԻՏԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

6) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱԽԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 18-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԶԵՆԻԹ» ՏԵՍԱԿԻ ՀԱԿԱԿԱՐԿՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԸ ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Օձուն համայնքի սեփականություն հանդիսացող «ԶԵՆԻԹ» տեսակի հակակարկտային կայանը „Անշարժ գույքի անհատույց օգտագործման„ պայմանագրով հանձնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ին :

2. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրինության հետ կնքել սույն որոշման առաջին կետում նախատեսված պայմանագիրը (պայմանագրերը), կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության „Ընտանեկան օրենսգրքի„ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱԴԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 20-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի „Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին„ N 1918-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Օձուն գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-112-0052-0046 կադաստրային ծածկագրով 0.0255 հա հատուկ պահպանվող տարածքների հողերից, քարտեզագրման սխալի ուղղման նպատակով, բնակավայրի հողերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 21-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0037-0031 ԵՎ 06-112-0442-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի , Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 67-րդ, հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 11 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0037-0031 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0048 հա մակերեսով հողամասը, հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել տասնվեց հազար չորս հարյուր տասնվեց (16.416) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1.000) ՀՀ դրամ: Աճուրդում հաղթող ճանաչել առավել բարձր գին առաջարկող մասնակցին:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 3/4 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0442-0064 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.0114 հա մակերեսով հողամասը, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների վերանորոգման արհեստանոց կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել հիսունյոթ հազար (57.000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1,000) ՀՀ դրամ: Աճուրդում հաղթող ճանաչել առավել բարձր գին առաջարկող մասնակցին:

Վերոնշյալ հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, *պատմամշակութային հուշարձանների պահպանության* գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին և երկրորդ կետերում նշված հողամասերի աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 22-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԽԱԼԱԹԻ ՏԻՏԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 – րդ հոդվածի 3 – րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Օձուն համայնքի բնակիչ Լյուդմիլա Խալաթի Տիտանյանին (հասցե գ. Օձուն, փողոց 14, նրբանցք 1, տուն 7, ՀՎՀՀ 13872035) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի գույքահարկի յոթ տարվա ապառքից՝ երեսունութ հազար երեք հարյուր (38.300) ՀՀ դրամ գումարի չափով և վեց տարվա տույժից՝ քսան հազար երեք հարյուր տասներեք (20.313) ՀՀ դրամ գումարի չափով (ընդամենը՝ հիսունութ հազար վեց հարյուր տասներեք (58.613) ՀՀ դրամ):

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Լ. Տիտանյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«30» ապրիլի 2014 թվականի N 23-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱԽԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 – րդ հոդվածի 3 – րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Օձուն համայնքի բնակիչ Կորյուն Մարտունի Հախինյանին (հասցե գ. Օձուն, փողոց 21, փակուղի 1, տուն 6/1, ՀՎՀՀ 13790563) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի գույքահարկի երեք տարվա տույժից՝ հինգ հազար ինը հարյուր երեսուներկու (5.932) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Սույն որոշման համար հիմք են հանդիսանում Օձուն համայնքի բնակիչ Կ. Հախինյանի դիմումը և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2014թ., ապրիլի 30
Գ. Օձուն